

ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՐՑԵՐ—ВОПРОСЫ МИКРОБИОЛОГИИ

ԳՐԱԿ 4 (XIV)

1969

Վ ы պ ս կ 4 (XIV)

Ա. Գ. ՍԵՎՈՅԱՆ, Փ. Գ. ՍԱՐՈՒԵԱՆՅԱՆ, Գ. Պ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԳԻՒՆՈՒ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹԹՎԱՑՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱԾ ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՔ

Գինեգործական արդյունաբերության մեջ հաճախ նկատվում են գինու թթվեցման դեպքեր, որոնք վնաս են պատճառում գինեգործությանը, ուստի այդ հարցի ուսումնասիրությունն ունի կարևոր դորժնական նշանակություն:

Երիտասարդ գինու մեջ հանդիպում են զանազան բակտերիաներ, որոնք իրենց զարգացման ընթացքում ազդում են գինու որակի վրա:

Գինու թթվեցման հարուցիչները մեծ մասամբ պատկանում են կաթնաթթվային ու քացախաթթվային բակտերիաների խմբերին:

Գինու հիվանդությունների ուսումնասիրությունը լինելով արդի միկրոբիոլոգիայի կարևորագույն հարցերից մեկը, միշտ էլ իր վրա է բևեռել հետազոտողների ուշադրությունը (Արրամովիչ, Կոժենիկովա 1955, Մոգիլյանսկի 1960, Կվասնիկով 1960, Radler 1962, Սարուխանյան, Սևոյան 1965, Սարուխանյան, Սևոյան, Մովսիսյան 1966 և ուրիշներ):

Բարձրորակ գինի ստանալու գործում, հումքի որակի հետ միասին, վճռական նշանակություն ունի նաև խմորման բարձր ունակությամբ օժտված՝ գինու շաքարասնկային ուսուայի օգտագործումը:

Մեր նախորդ աշխատություններից (Սարուխանյան, Սևոյան, Մովսիսյան, 1965, 1966) պարզվել է, որ փորձարկվող *Saccharomyces* vini Արմենիա 490 շաքարասնկային ուսուան խմորման բարձր ունակության հետ մեկտեղ օժտված է նաև գինու թթվեցում առաջացնող քացախաթթվային ու կաթնաթթվային բակտերիաների նկատմամբ անտագոնիստական հատկությամբ: Ուստի, հետաքրքրություն է ներկայացնում նաև գինու թթվեցում առաջացնող քացախաթթվային ու կաթնաթթվային բակտերիաների նկատմամբ *Saccharomyces* vini Արմենիա 490 շաքարասնկային ուսուայի խմորված երիտասարդ գինու դիմացկունության ուսումնա-

սիրությունը նրա հետագա հասունացման պրոցեսում:

Այդ նպատակի համար օգտագործվել է *Saccharomyces vini* Արմենիա 490-ով Ասկենաս խաղողի պաստերիզացված քաղցուի խմորումից առաջված սեղանի շոր գինին:

Այսուհետեւ, 44 օրից հետո այդ գինու մեջ, որը չի պարունակում խմորող շաքարանիկի կենսունակ բջիջներ, ուսումնաժրվել է *Saccharomyces vini* Արմենիա 490 շաքարանկային ռասայի, գինու թթվեցում առաջացնող քացախաթթվային ու կաթնաթթվային բակտերիաների զարգացման ընթացքը: Հետազոտությունները կատարվել են հետևյալ տարրերակներով.

Գինի 44 օրական (ստուգիչ)

Գինի 44 օրական + 2% Արմենիա 490 շաքարանկային մակարդ

Գինի 44 օրական + 2% կաթնաթթվային բակտերիաների մակարդ

Գինի 44 օրական + 2% քացախաթթվային բակտերիաների մակարդ

Գինի 44 օրական + 1% կաթնաթթվային + 1% քացախաթթվային բակտերիաների մակարդներ

Այս տարրերակներով փորձերը տարվել են 25—28°C ջերմության պայմաններում, 30 օր տևողությամբ:

Գինու մեջ փորձարկվող միկրոօրգանիզմների զիմացկունությունը բացահայտելու նպատակով որոշվել է քաղցուի 1 մլ-ում կենսունակ բջիջների թիվը: Նմուշները վերցվել են վարակման պահին, այնուհետև 5, 10, 15, 20 և 30 օրերից հետո:

Շաքարանկերի ու կաթնաթթվային բակտերիաների աճեցողության համար օգտագործվել է զարու ածիկային քաղցուի պահային միջավայրը, իսկ քացախաթթվային բակտերիաների համար՝ նույնը 2% գինու սպիրտի հետ: Միկրոօրգանիզմների աճեցողության վերաբերյալ փորձի արդյունքները, որոնք բերված են աղյուսակ 1-ում, ցույց են տալիս, որ Արմենիա 490 շաքարանկային ռասան իր կենսագործունեության նյութերի ազդեցության պայմաններում կենսունակությունը պահպանում է 20 օր, բջիջների թվի աստիճանական նվազումով:

Կաթնաթթվային բակտերիաները այդ միջավայրում պահպանվում են ավելի կարճ տևողությամբ՝ 5 օր, կենսունակ բջիջների թվի զգալի նվազումով: Նույն երեսությը նկատվում է նաև

Աղյուսակ 1

Արմենիա 490 շաքարասնկային ռասայով խմորված գինու մեջ փորձարկվող միկրոօրգանիզմների կենսունակությունը

փորձի տարրերակները	սկզբ-նային	միկրոօրգանիզմների թիվը 1 մլ-ում (հազարներով)				
		5	10	15	20	30
Գինի + 2% շաքարասնկային յակարդ	770	140	120	35	0,4	0
Գինի + 2% կաթնաթթվային բակտերիաների յակարդ	15,200	661	—	0	0	0
Գինի + 2% քացախաթթվային բակտերիաների յակարդ	960	0	0	0	0	0
Գինի + 1% քացախաթթվային բակտերիաների + 1% կաթնաթթվային բակտերիաների յակարդ	1400	176	0	0	0	0

Լաթնաթթվային ու քացախաթթվային բակտերիաների համատեղ աճելու դեպքում: Այդ գինու պայմաններում քացախաթթվային բակտերիաների օգտագործման դեպքում, չնայած 1 մլ-ում նրանց թիվը եղել է 960 հազար, սակայն փորձի 5-րդ օրում բակտերիաների կենսունակ բջիջներ չեն հայտնաբերվել: Այսպիսով, ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, Արմենիա 490-ով խմորված գինու մեջ, որը պարունակում է այդ շաքարասնկի նյութափոխանակության արգասիքները, կարճ ժամանակամիջոցում ճնշվում է քացախաթթվային ու կաթնաթթվային բակտերիաների կենսունակությունը:

Այնուհետև հետազոտվել է այդ գինու քիմիական կազմը, փորձարկվող միկրոօրգանիզմներով վարակելուց 30 օր հետո:

Որոշվել են սպիրտի, տիտրովող թթվության, ցնդող թթուների ու կաթնաթթվի քանակությունը և pH-ը: Քիմիական անալիզների արդյունքները բերված են աղյուսակ 2-ում: Ինչպես տեսնում ենք աղյուսակի տվյալներից փորձի բոլոր տարրերակներում, ստուգիչի համեմատությամբ ցնդող թթուների ($0,69 - 0,8$ գ/լ) ու տիտրվող թթվության ($7,28 - 7,41$ գ/լ) քանակությունը չի ենթարկվել փոփոխության:

Գինու մյուս բաղադրիչ մասերը ևս հիմնականում մնացել են նույնը. այսպես, օրինակ՝ կաթնաթթուն տատանվում է $0,28 - 0,67$ գ/լ-ի, սպիրտը՝ $10,29 - 11,25$ ծավ. %-ի, իսկ pH-ը՝ $3,40 - 3,59$ -ի սահմաններում:

Աղյուսակ 2

Արմենիա 490 շաքարասնկով խմորված 44 պահան գինու թիմիական
կազմը, տարրեր միկրոօրգանիզմներով զարակալուց 20 որ օնու

փոքրի ապրենուկները	լուրջ մատի. մ	ցանցի թթվածքը մ/լ	ավագանու թթվածքը մ/լ	կոբանու թթվածքը մ/լ	pH
Դինի (սառացիչ)	10,56	0,69	7,28	0,44	3,52
Դինի + 2% շաքարասնկույթին մակարդ	11,25	0,8	7,41	0,45	3,59
Դինի + 2% կաթնաթթվային բական- թիմիականի մակարդ	10,29	0,75	7,41	0,67	3,47
Դինի + 2% բացախաթթվային բակ- աների մակարդ	10,7	0,69	7,28	0,28	3,51
Դինի + 1% բացախաթթվային բակ- աների մակարդ + 1% կաթնաթթվային բակաների մակարդներ	10,83	0,72	7,34	0,48	3,40

Այս ցուցանիշներից պարզում է, որ չնայած Արմենիա 490 շաքարասնկերով խմորված գինին վարակվել է գինու թթվածքում առաջացնող կաթնաթթվային ու բացախաթթվային բակտերիանե-
րով, բայց և այնպես գինին քիմիապես չի փոփոխվել շնորհիվ այդ շաքարասնկային ռասայի մետարոդիտների յուրահատկության:

Հետազոտությունների արդյունքներից կարելի է հանգել հե-
տևյալ եղակացությանը.

Saccharomyces *vini* Արմենիա 490 շաքարասնկային ռասա-
յով խմորված գինու մեջ կանխվում է գինու թթվածքում առաջացնող
բացախաթթվային ու կաթնաթթվային բակտերիաների զարգացու-
մը: Այդ պատճառով էլ հիշյալ գինին այդ հիվանդության նկատ-
մամբ կայուն է և պահպանում է իր քիմիական նորմալ կազմը:

Ա. Գ. Սևոյան, Փ. Գ. Կարսանյան և Գ. Պ. Մովսեսյան

О стойкости вина против возбудителей скисания

Резюме

Для получения высококачественного вина имеет значение не только соответствующий виноградный сок, но и дрожжевые культуры, обладающие высокой бродильной способностью.

В наших предыдущих работах (Карсаниан, Севоян, Мов-

сесян, 1965, 1966) было доказано, что раса дрожжей Армения 490 обладает не только высокой бродильной способностью, но и является антагонистом молочнокислых и уксуснокислых бактерий, которые вызывают скисание вин.

В настоящей работе мы задались целью выяснить действие продуктов жизнедеятельности расы дрожжей Армения 490 на возбудителей, вызывающих скисание вин.

На виноградном соке сорта Воскеат с применением культуры дрожжей Армения 490 нами было приготовлено здоровое сухое столовое вино. В здоровое вино были внесены в различных вариантах как дрожжи, так и молочнокислые и уксуснокислые бактерии.

Результаты работ показали, что в здоровом вине, полученном с применением дрожжей 490, развитие уксуснокислых и молочнокислых бактерий не происходит. При заражении вина только дрожжами последние в продолжение 20 дней сохраняются в вине, но не развиваются. Через месяц после заражения вина как дрожжами, так и бактериями химический состав его остался неизменным.

A. G. Sevyan, F. G. Sarukhanian, G. P. Movsessian

On The stability of wine versus the pathogens of their souring

Summary

The present work has been aimed at determining the action of the products of, viability of the yeast strain Armenia 490 on the pathogens causing the souring of wine.

The results of the research indicated that no growth of acetate and lactic bacteria occurs in normal wine obtained with the application of yeasts strain 490. When the wine is contaminated with yeasts only, the latter maintain their existence for 20 days without growing. Tests made 20 days after the contamination of the wine by both yeasts and bacteria have shown no change in the chemical composition of the wine.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Абрамович В. В., Кожевникова Е. Г. 1955. Угнетение уксуснокислых бактерий винными дрожжами на основе направленного антагонизма. «Виноделие и виноградарство СССР», 5, 19.
- Квасников Е. И., 1960. Биология молочнокислых бактерий. Ташкент.
- Могиллянский Н. К. 1960. Уксусные бактерии и скисание вина. Кишинев.
- Саруханян Ф. Г., Севоян А. Г. 1965. Взаимодействие дрожжей с молочнокислыми бактериями, вызывающими скисание вина. Изв. АН АрмССР, XVIII, 12, 44.
- Саруханян Ф. Г., Севоян А. Г., Мовсесян Г. П. 1966. Выбор рас винных дрожжей, стойких к уксуснокислым бактериям. «Виноделие и виноградарство СССР», 5, 10.
- Radler F. 1952. Über die Milchsäurebakterien des Weines und den biologischen Säureabbau. Vitis, 3, 3, 144.